ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԴՇԻԳ-ԳՀԱՊՁԲ-18/3

ք. Երևան «11» մայիսի 2018 թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Դատաիրավական ԾԻԳ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն՝ Տաթեվիկ Դավթյանի, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տիգրան Ղարիբյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տասն) օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տաս) օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **86920 (ութսունվեց հազար ինը հարյուր քսան)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>10 (տաս)</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքել իս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տույժ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության «Դատախազական ծԻԳ» ՊՀ **Ք. Երևան, Զաքյան 3** **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** **Հ/Հ 900011474310** **ՀՎՀՀ 02553363** _____ /ստորագրություն/ Կ.Տ	**«Սմարթլայն» ՍՊԸ** **Ք. Երևան, Վարդանանց 110** **«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ** **Հ/Հ 16300-7031509** **ՀՎՀՀ 01548908** _____ /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«11» մայիսի 2018թ. կնքված
ԴՇԻԳ-ԳՀԱՊՁԲ-18/3 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
4	**30192111/1**	**4 Թանաքի բարձիկներ (Horse)**	ՉԺՀ	Թանաքի բարձիկ՝ պլաստմասե՝ բացվող կափարիչով, բարձիկի չափսերը՝ 70x110մմ, բարձիկը՝ կապույտ գույնի:	**հատ**	250	500	**2**	ք.Երևան, Զաքյան 3	**2**	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.**

5	30192114/1	5 Թանաք, կնիքի բարձիկի համար (Horse)	ՉԺՀ	Թանաք կնիքի բարձիկի համար սրվակներով, թանաքը՝ կապույտ գույնի, սրվակում՝ 30մլ:	հատ	130	260	2	ք.Երևան, Զաքյան 3	2	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.
6	30192121/1	6 Գրիչ գնդիկավոր (Finergrip)	Հնդկաստան	Գրիչ գնդիկավոր,կապույտ գրող, ծայրը՝ 0.5մմ, առանձնացող թափանցիկ կափարիչով, բռնելու մասը՝ ռետինապատ, գրիչի հիմնական գույնը՝ սպիտակ, հետին ծայրը՝ պլաստմասե առանձնացվող՝ մուգ կապույտ գույնի, առջևի ծայրը՝ մետաղական՝ նիկելապատ:	հատ	70	1050	15	ք.Երևան, Զաքյան 3	15	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.
7	30192128/1	7 Գրիչ գելային (Piano)	ՉԺՀ	Գրիչ գելային, կապույտ և/կամ սև գրող, առանձնացող կափարիչով՝ ամբողջապես պլաստմասե, բռնելու մասը՝ ռետինապատ , կափարիչի գրպանին ամրացնելու մասը՝ մետաղական նիկելապատ, հետին ծայրը՝ պլաստմասե առանձնացվող՝ նիկելապատ, առջևի ծայրը՝ մետաղական՝ նիկելապատ: Գրիչի հիմնական գույնը՝ սև: Ծայրը՝ 0.7մմ:	հատ	180	2700	15	ք.Երևան, Զաքյան 3	15	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.

8	30192130/1	8 Մատիտներ (Amigo)	ՉԺՀ	Մատիտ՝ HB կոշտության գրաֆիտե միջուկով, սրված գրելու համար, փայտյա կամ փայտին փոխարինող նյութից պատրաստված, հետևի մասում՝ ռետին:	հատ	30	150	5	ք.Երևան, Զաքյան 3	5	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.
9	30192160/1	9 Շտրիխներ (Givors)	ՉԺՀ	Շտրիխ՝ սպիտակեցնող՝ գրասենյակային, սրվակային տեսքով: Սպիտակեցնող ծայրը՝ գնդիկավոր գրչաձև գրող, սպիտակեցնող հեղուկը՝ առնվազն 15մլ: Արտադրման տարեթիվը՝ 2018թ.:	հատ	170	1360	8	ք.Երևան, Զաքյան 3	8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.
10	30192710/1	10 Սոսնձամատիտ գրասենյակային (Fantatick)	ՉԺՀ	Սոսնձամատիտ գրասենյակային, պլաստմասե իրանով, սոսինձի զուտ քաշը՝ 15գ: Արտադրման տարեթիվը՝ 2018թ.:	հատ	240	3600	15	ք.Երևան, Զաքյան 3	15	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.

11	30197100/1	11 Կարիչի մետաղալարե կապեր (Kangaro)	ՉԺՀ	Կարիչի մետաղալարե կապեր, գրասենյակային, ասեղի չափը՝ 24/6M, տուփով: Տուփում՝ 1000 ասեղ, Ասեղների կապերին դաջված ապրանքային նշանի անվանումը:	տուփ	140	1400	10	ք.Երևան, Զաքյան 3	10	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.
12	30197231/1	12 Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ (Impulse)	Իմպուլս-Ա ՓԲԸ ՀՀ	Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ, թափանցիկ՝ փայլուն: Հաստությունը՝ առնվազն 50 միկրոն: A4 չափսի թղթերի համար: Նախատեսված արագակարին ամրացնելու համար:	հատ	9	4500	500	ք.Երևան, Զաքյան 3	500	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.
13	30197234/1	13 Թղթապանակ, կոշտ կազմով AN PAI	ՉԺՀ	Թղթապանակ, կոշտ կազմով, ռեգիստրատոր, մետաղական կարիչով՝ առանձին մետաղական ֆիքսող հարմարանքով: Կարիչը՝ մեխանիկական մեխանիզմով: Հաստությունը՝ 75-80մմ, Բոլոր եզրանկյունները՝ մետաղական թիթեղապատ: Ներսի կողմից սպիտակ: Արտաքին գույնը՝ միատոն՝ տարբեր գույների՝ պատվիրատուի համաձայնությամբ:	հատ	550	8250	15	ք.Երևան, Զաքյան 3	15	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.

14	30197322/1	14 Կարիչ, 20-50 թերթի համար (Kangaro)	Հնդկաստան	Կարիչ գրասենյակային՝ ստեպլեր, նախատեսված թղթերը միմյանց մետաղական ասեղով ամրացնելու համար, N 24/6-1M չափսի մետաղական ասեղներով կարող, առնվազն 30 հատ թուղթ (Խտությունը՝ 80 գ/մ²) առանց ասեղի աղավաղումների միաժամանակ կարելու հնարավորությամբ:	հատ	1250	3750	3	ք.Երևան, Զաքյան 3	3	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.

15	30197631/1	15 Թուղթ A4 ֆորմատի 1 /21x29.7/ (Pioneer)	Նավիգատոր Կոմփանի Պորտուգալիա	Թուղթ A4 չափսի, չկավճած, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝ 80 գ/մ² (առանց շեղումների): Չափերը՝ 210X297 մմ. (առանցշեղումների): Առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության: Նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար Պիտանի՝ լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ: Պայծառությունը՝ 105%: Հաստությունը՝ 108մկմ: Անթափանցելիությունը՝ 94%-ից ոչպակաս: Խոնավությունը՝ 3,5-4,5%: Գործարանային փաթեթավորմամբ: Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների): Մեկտուփի քաշը՝ 2,5 կգ: ISO 14001, ISO 9706, ISO 17025, ISO 11475, OHSAS 18001, NordicPine, GreenStarSystem, FSC, PEFC, ECF ստանդարտներին համապատասխան: Տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3%:	տուփ	1720	25800	15	ք.Երևան, Զաքյան 3	15	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.

16	30199400/1	16 Սոսնձա պատված կամ կպչուն թուղթ (Jia Te)	ՉԺՀ	Թուղթ ինքնասոսնձվող եզրով, տրցակներով՝ 100-ական շերտ տրցակում, բաց-դեղին միատոն գույնի: Չափսը՝ 7.6x12.3սմ: Փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով:	հատ	180	3600	20	ք.Երևան, Զաքյան 3	20	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.
17	30199400/2	17 Սոսնձա պատված կամ կպչուն թուղթ (Jia Te)	ՉԺՀ	Ինքնասոսնձվող եզրով էջանիշ՝ թղթյա կամ թղթանման պլաստիկ նյութից պատրաստված, տրցակներով, յուրաքանչյուր տրցակում տարբեր գույների առկայությամբ, յուրաքանչյուր տրցակում առնվազն 70 էջանիշ: Փաթեթավորումը՝ թափանցիկ պոլիէթիլենային թաղանթ:	հատ	300	1500	5	ք.Երևան, Զաքյան 3	5	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.

18	30234650/1	18Ֆլեշ հիշողություն, 32 GB (Verbatim)	ՉԺՀ	Ֆլեշ հիշողություն, 32 GB, USB-2, Verbatim ֆիրմայի արտադրության:	հատ	9500	28500	3	ք.Երևան, Զաքյան 3	3	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.

ԳՆՈՐԴ

ՀՀ արդարադատության նախարարության
«Դատաիրավական ՏԻԳ» ՊՀ
Ք. Երևան, Զաքյան 3
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011474310
ՀՎՀՀ 02553363

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
Ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

/ստորագրություն/

Հավելված N 2
«11» մայիսի 2018թ. կնքված
ԴՕԻԳ-ԳՀԱՊՁԲ-18/3 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	**30192111/1**	**4 Թանաքի բարձիկներ**	-	-	-	-	175	175	300	300	300	500	500	500	500
5	**30192114/1**	**5 Թանաք, կնիքի բարձիկի համար**	-	-	-	-	91	91	156	156	156	260	260	260	260
6	**30192121/1**	**6 Գրիչ գնդիկավոր**	-	-	-	-	367,5	367.5	630	630	630	1050	1050	1050	1050
7	**30192128/1**	**7 Գրիչ գելային**	-	-	-	-	945	945	1620	1620	1620	2700	2700	2700	2700

8	30192130/1	8 Մատիտներ	-	-	-	-	52.5	52.5	90	90	90	150	150	150	150
9	30192160/1	9 Շտրիխներ	-	-	-	-	476	476	816	816	816	1360	1360	1360	1360
10	30192710/1	10 Սոսնձամատիտ գրասենյակային	-	-	-	-	1260	1260	2160	2160	2160	3600	3600	3600	3600
11	30197100/1	11 Կարիչի մետաղալարե կապեր	-	-	-	-	490	490	840	840	840	1400	1400	1400	1400
12	30197231/1	12 Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	-	-	-	-	1575	1575	2700	2700	2700	4500	4500	4500	4500
13	30197234/1	13 Թղթապանակ, կոշտ կազմով	-	-	-	-	2887.5	2887.5	4950	4950	4950	8250	8250	8250	8250
14	30197322/1	14 Կարիչ, 20-50 թերթի համար	-	-	-	-	1312.5	1312.5	2250	2250	2250	3750	3750	3750	3750
15	30197631/1	15 Թուղթ A4 ֆորմատի1 /21x29.7/	-	-	-	-	9030	9030	15480	15480	15480	25800	25800	25800	25800
16	30199400/1	16 Սոսնձապատված կամ կպչուն թուղթ	-	-	-	-	1260	1260	2160	2160	2160	3600	3600	3600	3600
17	30199400/2	17 Սոսնձապատված կամ կպչուն թուղթ	-	-	-	-	525	525	900	900	900	1500	1500	1500	1500

18	30234650/1	18 Ֆլեշ հիշողություն, 32 GB	-	-	-	-	9975	9975	17100	17100	17100	28500	28500	28500	28500

ԳՆՈՐԴ
ՀՀ արդարադատության նախարարության
«Դատաիրավական ԾԻԳ» ՊՀ
Ք. Երևան, Զաքյան 3
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011474310
ՀՎՀՀ 02553363

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
Ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

/ստորագրություն/

Հավելված N 3
«11» մայիսի 2018թ. կնքված
ԴՇԻԳ-ԳՀԱՊՁԲ-18/3 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
«Սմարթլայն» ՍՊԸ
Ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

Պատվիրատու
ՀՀ արդարադատության նախարարության
«Դատաիրավական ԾԻԳ» ՊՀ
Ք. Երևան, Զաքյան 3
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011474310
ՀՎՀՀ 02553363

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«11» մայիսի 2018թ. կնքված
ԴՕԻԳ-ԳՀԱՊՁԲ-18/3 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն